

Երևանի պետական համալսարանում գործող
ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԺԲ.00.03- Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցման համար ներկայացված Սիրո Հրաչի Ամիրխանյանի «Հանրային իրավունքի իրավաբանական անձինք՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Աշխատանքը նվիրված է հանրային իրավունքի իրավաբանական անձանց էության, դրանց բնորոշ հատկանիշների և տեսակների բացահայտմանը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններում դրանց մասնակցության առանձնահատկությունների վերհանմանը:

Կատարված ուսումնասիրությամբ հեղինակին հաջողվել է հիմնավորել թեմայի արդիականությունը, հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ համապարփակ գիտական ուսումնասիրության առարկա դարձել հանրային իրավունքի իրավաբանական անձանց՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի բնույթին, էությանը, վերջիններիս բնորոշ տարբերակիչ գծերին վերաբերող հարցերը, հիմնավորել հանրային և մասնավոր իրավունք իրավաբանական անձանց տարանջատման անհրաժեշտությունը, ուսումնասիրել հանրային իրավունքի իրավաբանական անձանց հատկանիշների հստակեցման և սահմանման չափանիշները, հստակեցնել հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակներին ու քաղա-

քացիական իրավասուբյեկտությանը վերաբերող հարցերը, վերլուծել հանրային իրավունքի իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական իրավասուբյեկտությանը և պատասխանատվությանը առնչվող խնդիրները:

Հեղինակն իր մոտեցումները առաջ քաշելիս և համապատասխան վերլուծություններ կատարելիս հենվել է հայրենական և արտասահմանյան գրականության մեջ իրավագետների կողմից ներկայացված տեսակետների վրա, ինչպես նաև կատարել է գործնական նշանակություն ունեցող ընդհանրացումներ և առաջարկներ: Նման մոտեցումն ընդգծում է աշխատանքի արժանիքը:

Հեղինակը անդրադառնալով հանրային իրավունքի իրավաբանական անձանց ինստիտուտի զարգացման խնդրին աշխատանքի 22-րդ էջում արդարացիորեն նշում է, որ ներկայումս արդեն իսկ մի շարք իրավաբանական անձեր հիմնադրվում են ոչ թե քաղաքացիական իրավունքի նորմերի հիման վրա, այլ նաև հանրային իրավունքի նորմերի հիման վրա, որի արդյունքում ակնհայտ է դառնում, որ իրավաբանական անձ հասկացությունը գործածական է նաև հանրային իրավունքի ճյուղերի համար, իսկ այդ իրավաբանական գրականության մեջ իրավաբանական անձ հասկացությունը քննարկվում է որպես ընդհանուր իրավական կատեգորիա և գտել է, որ այն հանգամանքը, որ մի շարք արտասահմանյան երկրներ առանձնացրել են հանրային և մասնավոր իրավունքի իրավաբանական անձերը որպես իրավաբանական անձանց տեսակներ, կոչված է ապացուցելու հեղինակի աշխատանքում նշված պնդումները:

Աշխատանքի 24-րդ, 25-րդ և 27-րդ էջերում հեղինակը նշում է, որ հանրային իրավունքի իրավաբանական անձի գաղափարի ընդօրինակումը թույլ կտա վերացնել այն անորոշությունը, որը կապված է «սուբյեկտ (կազմակերպություններ, հանրային իրավական կազմավորումներ, պետական մարմին) իրավաբանական անձի իրավունքներով» կամ «ունի իրավաբանական անձի իրավունքներ» գործող կառուցակարգի հետ, իսկ հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնացման անհրաժեշտությունը ՀՀ-ում, ի թիվս աշխատանքում նշված հիմնավորումների, պայմանավորված է նաև ՀՀ Սահմանադրության 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, որի 180-րդ հոդվածի 2-րդ և 189-րդ հոդվածի 3-րդ մասերը համայնքը և միջհամայնքային միավորումները դիտում է որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Աշխատանքի 60-րդ էջում հեղինակին հաջողվել է ներկայացնել Հանրային իրավունքի իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշները, որոնցից

հետաքրքրական է առաջին հատկանիշը. համապատասխան նորմատիվ իրավական ակտով կամ դրա հիման վրա հիմնադրված լինելը, որն ենթադրում է, որ այս իրավաբանական անձինք ստեղծվում են հատուկ կարգով՝ հանրային իշխանության մարմնի կողմից ընդունված օրենքով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով կամ դրանց հիման վրա, իսկ Սահմանադրության հիման վրա հիմնադրվում և գործում է պետությունը, հանրային իրավունքի մյուս իրավաբանական անձինք հիմնադրվում են օրենքներով կամ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով կամ դրանց հիման վրա:

Աշխատանքի 2-րդ գլխում հեղինակը բովանդակային ուսումնասիրության է ենթարկել հանրային իրավունքի իրավաբանական անձանց տեսակներին վերաբերող խնդիրները և կարողացել է ներկայացնել ինքնատիպ, գիտական բանավեճի շրջանակներում տեղավորվող ընդհանարցումներ և եզրակացություններ:

Աշխատանքի 138-րդ էջում հեղինակը եկել է այն հիմնավորված եզրահանգմանը, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք մասնավոր իրավունքում ունեն հատուկ իրավասուբյեկտություն և նրանց չի կարող տրվել ունիվերսալ հնարավորություններ, իսկ 3.2. պարագրաֆի շրջանակներում կարողացել է վեր հանել հանրային իրավունքի իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները:

Ամփոփելով վերոգրյալը կարելի է փաստել, որ հեղինակը կատարել է կարևոր գիտա-պրակտիկ նշանակություն ունեցող եզրահանգումներ, մշակել է տեսական հասկացություններ և ներկայացրել օրենսդրական բարեփոխումների գործնական առաջարկներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ինը պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության մանրամասն ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը կատարել է թեմային նվիրված համալիր և ավարտուն աշխատանք՝ օգտագործելով դիալեկտիկական, համեմատական-իրավական և գիտական այլ մեթոդներ: Բացի այդ հեղինակի կողմից ներկայացված նկատառումներն ու դիտարկումները շատ արժեքավոր են, և հաստատապես կարելի է փաստել, որ հեղինակը կարողացել է ներկայացնել գիտական պատշաճ մակարդակ ունեցող աշխատանք:

Աշխատանքի հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 8 գիտական հոդվածներում, ինչպես նաև սեղմագրում:

Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը ընդհանուր առմամբ համապատասխանում են ԲԿԳԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Միևնույն ժամանակ, ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ ուսումնասիրված ատենախոսությունը, գերծ չէ վիճելի դրույթներից և որոշ թերություններից, որոնք կայանում են հետևյալում.

1. Պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթում հեղինակը նշում է. «Կատարված ուսումնասիրությամբ, հաշվի առնելով մեր կողմից վեր հանված հանրային իրավունքի իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշները, տեսական գրականության մեջ արտահայտված կարծիքները, ինչպես նաև մի շարք երկրների փորձը՝ առաջարկվում է տալ հանրային իրավունքի իրավաբանական անձանց հետևյալ բանաձևումը. «Հանրային իրավունքի իրավաբանական անձը համապատասխան նորմատիվ իրավական ակտով կամ դրա հիման վրա հիմնադրված հանրային-իրավական կազմակերպություն է, որն ունի անվանում, ունի իրավունքներ ու պարտականություններ, կրում է պատասխանատվություն իր իրավական ակտերի և գործողությունների համար, ունի հանրային-իշխանական լիազորություններ կամ կապված է հանրային իշխանության հետ և իրականացնում է ֆինանսական, քաղաքական, պետական, սոցիալական, կրթական, մշակութային կամ այլ հանրային գործունեություն:»»:

Ցանկալի կլիներ որպեսզի հեղինակը հիմնավորեր, թե նշված դրույթը ինչպիսի տեսական կամ գործնական նշանակություն ունի, տեսական կամ գործնական ի՞նչ խնդիր է լուծում: Հանրային իրավունքի իրավաբանական անձի նման սահմանման պայմաններում արդյո՞ք պետությունը կարող է դիտվել որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ, թե պետությունը այնուամենայնիվ պետք է մնա քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ:

2. Պաշտպանության ներկայացվող 6-րդ դրույթում հեղինակը նշում է. «Կատարված ուսումնասիրությամբ, հաշվի առնելով մեր կողմից վեր հանված հանրային իրավունքի իրավաբանական անձանց բնորոշ հատկանիշները, ուսումնասիրելով արտասահմանյան երկրների օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումները պատասխանատ-

վության մասին՝ առաջարկում ենք, սահմանել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձինք կրում են ինքնուրույն գույքային պատասխանատվություն, սակայն պետությունը, ինչպես նաև համայնքը պատասխանատու են հանրային իրավունքի իրավաբանական անձանց պարտավորություններով (անգամ այն դեպքում, երբ ազգային օրենսդիրը սահմանում է, որ իրավաբանական անձի հիմադիրը պատասխանատու չէ իրավաբանական անձի պարտավորությունների համար), եթե հանրային իրավական կազմավորումը չի ապացուցի այդ սուբյեկտների ինստիտուցիոնալ և օպերատիվ (գործառնության) անկախությունը»:

Գտնում ենք, որ հեղինակի նման մոտեցումը բավարար չափով հիմնավորված չէ և պետության կամ համայնքի համար կարող են առաջացնել անկանխատեսելի ֆինանսական ռիսկեր: Կարծում ենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտված նման դիրքորոշումը չի վերաբերում հանրային իրավունքի իրավաբանական անձի որպես քաղաքացիական հարաբերությունների մասնակցի քաղաքացիաիրավական պատասխանատվությանը առնչվող իրավիճակներին:

3. Աշխատանքում առկա է տեխնիկական վրիպակ, մասնավորապես աշխատանքի բովանդակության մեջ նշված չէ աշխատանքի 81-րդ էջում առկա 2-րդ գլխի վերտառությունը՝ «ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ»:

Այս ամենով հանդերձ, պետք է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Սիրո Ամիրխանյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժեքավոր: Այն շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սիրո Հրաչի Ամիրխանյանի «Հանրային իրավունքի իրավաբանական անձինք՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ» վերտառությամբ ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է

ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք» մասնագիտությանը (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք), բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «Իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ



ՎԱՀՐԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

04.12.2025թ.

«Վահրամ Ավետիսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ»

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ՝

ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱԶԻԿՅԱՆ